

Նշված, միմյանց համադրվող, հաշորդ խմբի առակների քովանդակութ-  
թյունը ցույց է տալիս, որ առակի ծագման վայրի համեմատ տարբեր են  
գործող պերսոնաժները, օր.՝ հայկական ձիուն և եզին արաբականում փո-  
խարինում է էջը, արջին՝ փիղը, մրջյունին՝ արտուլտը և այլն: Բնակա-  
նաբար, կերպարանափոխված պերսոնաժները հանդես են գալիս տարբեր վար-  
քագծով, բայց նրանք կատարում են միևնույն գործողութթյունները և դիտ-  
վում են որպես նույն առակի տարբերակներ: Այդ առումով միմյանց հա-  
կապես մոտ են , ,Եզն փախուցեալ ի լծոյ՝, , ,Ձի խրոխտացեալ՝՝ և  
 , ,Ըմբոստ էջը՝՝ խմբի առակները, որոնք միմյանց առնչվում են սյուժե-  
տային ընդգծված նույնութթյուններով, սակայն տիպաբանական համեմատու-  
թյունը բերում է այն եզրակացութթյան, որ հայկական առակն արաբականի  
հետ ծագումնաբանական ոչ մի կապ չունի:

Ինչ վերաբերում է Մխիթար Գոշի , ,Արջ և մրջյուն՝՝-ին, ապա  
պետք է ասել, որ սա հեղինակի միակ առակն է, որ զուգահեռներ ունի  
արաբական և հնդկական առակաշարում և բնութթյուն ու ոճով տարբերվում  
է նրա մնացած առակներից: Պերսոնաժների կերպարանափոխութթյուններն  
ամբողջութթյամբ չեն քողարկել հնդկական պատմվածքի հետքերը հայկական  
առակում: Չնայած Մխիթար Գոշի առակը Հ.Օրբելիին համարում է ժողո-  
վրդական, սակայն, ըստ իս, սույն առակը ծագում է ոչ թե ժողովրդա-  
կան բանահյուսութթյունից, այլ, ընդհակառակը, ժողովրդականացել է  
հնդկական պատմվածքի ուժով և այժմ էլ բազմաթիվ տարբերակներով պատ-  
մելվում և առկա է շատ ժողովուրդների մեջ:

Ռ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱԻ

ՀԱՅ ՄԱՆԱԿԱՆ ՔԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ

ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁԸ

Մանկական խաղերգային բանահյուսութթյան զրառումը մեզնում  
սկզբնավորվում է անցյալ դարի կեսերին և պայմանավորված է ազգային  
հասարակական կյանքի համընդհանուր աշխուժացմամբ ու ազգային արժե-  
քների հավաքմամբ, զնահատմամբ ու հրատարակմամբ:

1. Մանկական խաղերգային ստեղծագործութթյունները մանուկների  
միջավայրում կենցաղավարող խաղերի անբաժան մասն են և դրանց զրա-

ուումն էլ գրեթե միշտ կատարվել է միասնաբար /խաղի և խաղերգի գու-  
գորդությունը/։ Հնագույն խաղերից պահպանված են մասնակի պատառիկներ  
երգային հատվածներով, որոնցից շատերը մեր օրերում ստանալով նոր ե-  
րանգ ու հնչեղություն, հայ մանկական բանահյուսությունն են բերել նոր  
եզրանուններ /տերմիններ/։

2. Պարբերաբար ու նորովի հարստացող խաղերը խաղերգերին հաղոր-  
դում են նոր որակ, մանկական բանարվեստ ներմուծում բանաձևային հա-  
րուստ նյութ, որը և մանկան տարիքային, ինչպես նաև ստեղծագործությա-  
նականիշներին ներքին տարբերակման մասապարհով խմբավորվում է առան-  
ձին տեսակների։ Մանկական խաղերգերը, խաղի գործառնական կիրառության  
համապատասխան, կարելի է խմբավորել այսպես. երգեր՝ ասված խաղի հրա-  
վերի նպատակով՝ սկզբներգեր, հաշվերգեր, վիճակահանության երգեր և  
այլն. խաղի ընթացքում ասվող և բուն խաղին առնչվող երգեր, գվարժա-  
խոսական-երկխոսություններ և վերջապես խաղավարտի, հրաժեշտի երգեր։  
Խաղերգերը երաժշտական հնչեղությունն են հաղորդում խաղին և ազատում  
վերջինս չոր, անհրապույր ընթացքից։ Երեխաների էությունը համահնչյուն  
են խաղերի ութմիկ համաչափությանը գուգորդված աշխույժ կենսուրախ եր-  
գային հատվածները։

3. Խաղերը, ինչպես նաև դրանց անկապտելի մասը կազմող մանկական  
երգերը, մանկական բանահյուսության համեմատաբար կենսունակ տեսակնե-  
րից են և փոփոխվում ու նոր երանգ են ստանում երեխայի տարիքային  
զարգացմանը համապատասխան. մանկան կյանքի առաջին փուլում՝ խաղալիք-  
ներով, երկրորդում՝ ձեռնախաղի ու խայտանքի, երրորդում՝ խմբակային,  
զանազան խաղալիքներով /զնդակ, փայտ/ խաղեր։

4. Մանկական խաղերգային բանահյուսության հարուստ և հետաքրքիր  
բաժին են բառախաղային, խոսքախաղային երգերը, որոնք ասվում են գվար-  
ժալի ժամանցների ընթացքում և ունեն խոսքավարժական գործառույթ։

5. Մանկական խաղարվեստի ստեղծագործությունները հիմնականում  
ժառանգված են մեծահասակներից, ընդերքում պահում են ազգային նկարա-  
գրի և լեզվական մտածողության հարուստ ու քաղմաքնույթ նյութ, ինչ-  
պես նաև մանկական երգային արվեստի անկրկնելի ու բարձրարժեք ստեղ-  
ծագործություններ։ Այս իմաստով առանձնակի ուշադրության են արժանի  
մանկական, «ծիսական» երգերը /հարսանիքի, խնամախոսության, ծննդյան  
և այլն/, որոնք ևս փոխանցված են մեծերից և կատարման եղանակի ու կա-  
տակային բնույթի շնորհիվ համահնչյուն են երեխաների հոգեբանությանը։